

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

25.05.2016

Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները.

ՕՐԱԿԱՐԳ

1. 2015-2016 ուստարվա ամառային քննաշրջանի կազմակերպական աշխատանքների մասին:

(Զեկուցող՝ Ա. Ներսիսյան)

2. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հաստատում:

(Զեկուցող՝ Ա. Ներսիսյան)

3. 2016-2020թթ. ուսումնական և աշխատանքային պլանների հաստատում:

(Զեկուցող՝ Ա. Ներսիսյան)

4. ԵՊՀ ԻՄ գիտխորհրդի կազմում փոփոխություն կատարելու մասին: *(Զեկուցող՝ Ա. Ներսիսյան)*

ԼՄԵՑԻՆ՝ Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցող Ա. Ներսիսյանը ներկայացրեց քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները: Նշվեց, որ դրանք դեռևս ընթացքի մեջ են: Կազմվել և ուսումնական մաս հաստատման է ներկայացվել քննաշրջանի ժամանակացույցը/23.05.16-25.06.16թթ./: Հետագայում անպատեհ փոփոխություններից և ուղղումներից խուսափելու համար նախապես ժամանակացույցը քննարկվել է նաև ուսանողների հետ: Զեկուցողը փաստեց, որ հարցաշարերը ժամանակին տրամադրվել են ուսանողներին: Այժմ ստուգվում է ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը: Ստուգվում է ծրագրերի կատարողականին համապատասխան մատենավարության վիճակը: Ստուգումները ցույց են տալիս, որ որոշ դասախոսների մոտ կան թերացումներ, որոնք առաջիկայում կշտկվեն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Բ.Գ.Թ., ղոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., ղոցենտ Վ. Բրուտյանը, կ.գ.թ., ասիստենտ Ս. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 2015-2016ուստարվա ամառային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ – Ձեկուցողը խոսեց ռազմավարական ծրագրի կարևորության և անհրաժեշտության մասին, որպես ֆակուլտետի հեռանկարային գործունեության պլանավորում: Նա մատնանշեց, որ ֆակուլտետի ռազմավարական ծրագիրը պետք է բխի մասնաճյուղի ռազմավարական ծրագրի դրույթներից և պետք է բովանդակային առումով համապատասխանի մասնաճյուղի ռազմավարական ծրագրի շեշտադրումներին: Ըստ այդմ, մշակվում է ֆակուլտետի ռազմավարությունը՝ նպատակների, խնդիրների, առանձին գործողությունների, ինչպես նաև պատասխանատուների և համապատասխան ռեսուրսների լրակազմով՝ նախանշված ուղղությամբ ֆակուլտետի առաջընթացն ապահովելու համար: Հումանիտար գիտությունների ֆակուլտետը իր ռազմավարական ծրագրերով կոչված է ձևավորելու ուսանողակենտրոն միջավայր՝ սովորողներին ապահովելու իրենց ներուժը դրսևորելու լիարժեք հնարավորություններ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Բ.Գ.Թ., ղոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., ղոցենտ Վ. Բրուտյանը, կ.գ.թ., ասիստենտ Ս. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը:

ԼՍԵՑԻՆ՝ Խոսելով ուսումնական պլանների մասին՝ Ա. Ներսիսյանը տեղեկացրեց, որ այս փուլում ֆակուլտետի ամբիոններում քննարկվել և վերանայվել են ուսուցանվող հինգ մասնագիտությունների 2016-2020թթ. ուսումնական պլանները: Ըստ նրա՝ պատշաճ կրթական որակի ապահովման կարևորագույն պայմանը արհեստավարժ և մասնագիտորեն հիմնավորված

ուսումնական պլանի առկայությունն է: Ուսումնական պլաններում կատարվել են փոփոխություններ, որոնք հետապնդում են պատշաճ կրթություն իրականացնելու և խորը մասնագիտական գիտելիքներով զինված կադր թողարկելու նպատակ:

«Պատմություն» մասնագիտության 2016-20թթ. ուստարվա ուսումնական պլանը ենթարկվել է փոփոխության: Մասնագիտական որոշ առարկաների հարցում եղել են ժամաքանակների ավելացում («Հայոց պատմություն-1», «Հայոց պատմություն-2», «Հայոց պատմություն-4», «Հայոց պատմության պատմագրություն», «Միջին դարերի պատմություն-1» և այլն): Առաջարկ է եղել նաև ընդհանուր մասնագիտական դասընթացի մեջ ներառված «Նոր և նորագույն ժամանակների սոցիալ-քաղաքական պատմություն» առարկայի անվանումը վերափոխել «Նոր և նորագույն ժամանակների սոցիալ-տնտեսական պատմություն», հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքական պատմությունը «Նոր պատմություն-1,2» և «Նորագույն պատմություն» առարկաների շրջանակներում անցնում են:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 2016-20թթ. ուստարվա ուսումնական պլանը փոփոխության չի ենթարկվել:

«Օտար լեզու և գրականություն» մասնագիտության 2016-20թթ. ուստարվա ուսումնական պլանում կատարվել են հետևյալ փոփոխությունները: «Հայ հին և նոր գրականություն» առարկան 2-րդ կիսամյակից տեղափոխվել է 4-րդ կիսամյակ, «Հայ նորագույն գրականություն» առարկան 2-րդ կիսամյակից տեղափոխվել է 5-րդ կիսամյակ, «Տեսական քերականություն» առարկան 7-րդ կիսամյակից տեղափոխվել է 5-րդ կիսամյակ, «Հոգեբանություն» առարկան 4-րդ կիսամյակից տեղափոխվել է 5-րդ կիսամյակ, «Օտար լեզվի դասավանդման տեսություն և մեթոդներ » առարկան 7-րդ կիսամյակից տեղափոխվել է 6-րդ կիսամյակ, «Թարգմանության տեսություն և պրակտիկա» առարկան 7-րդ կիսամյակից տեղափոխվել է 6-րդ կիսամյակ:

Զեկուցողը նշեց, որ ներդրվել է նոր մասնագիտություն՝ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»: Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի կողմից ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացվել նոր մասնագիտության ուսումնական պլանը:

ՄՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետում ուսուցանվող չորս մասնագիտությունների՝ «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Օտար լեզու և գրականություն» 2016-2020թթ. ուստարվա ուսումնական պլանները:

ԼՍԵՑԻՆ - Օրակարգի 4-րդ կետը վերաբերում էր ԵՊՀ ԻՄ գիտխորհրդի կազմի փոփոխությանը: 2016թ. ապրիլ ամսին հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը անցավ այլ աշխատանքի: Նրա փոխարեն ֆակուլտետի դեկանի ԺՊ նշանակվեց հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի վարիչ Ա. Ներսիսյանը, ինչի պատճառով մասնաճյուղի գիտական խորհրդի կազմում ևս պիտի կատարվի փոփոխություն: Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանին մասնաճյուղի գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե կփոխարինի ֆակուլտետի նոր դեկանի ԺՊ Ա. Ներսիսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուսյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի ԺՊ Ա. Ներսիսյանին հաստատել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտխորհրդի կազմում:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. Ներսիսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ս. Խաչատրյան